Բիսմարկ

հայդուկներ

17-րդ դար

դասակարգում

քայլաշար

մուտք

# ՊԱՏՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ

## ուսումնասիրումը պատմության դասին

Բիսմարկ

հայդուկներ

17-րդ դար

պաշարում

դասավանդում

**Բովանդակային (առարկայական) գիտելիք**



**Հմտություններ**

**Ե՛Լ** բովանդակային գիտելիք (substantive knowledge)

**Ե՛Լ** ընթացային գիտելիք (procedural knowledge)

Մուտք

# Պատմական մտածողության կոնցեպտներ



Պատմության ուսումնասիրությունը պատճառների ուսումնասիրություն է: Պատմագետը…շարունակաբար տալիս է «ինչո՞ւ» հարցը, և քանի դեռ հույս ունի գտնել պատասխանը, նա հանգիստ չունի: Մեծ պատմագետը, կամ թերևս ավելի ընդհանրական վերցրած մեծ մտածողն այն մարդն է, ով տալիս է «ինչո՞ւ» հարցը…:

***Է. Հ. Կարր***

# Տարածված «խութերը»

- Դասագրքում արձանագրված պատճառները սոսկ արձանագրվում են, վերապատմվում, թվարկվում
- Պատճառները դիտարկվում են իրար հաջորդող մեկուսի իրադարձություններ կամ գծային շղթա, ինչը հնարավորություն չի տալիս բացահայտել դրանց միջև առկա կապերն ու հարաբերությունները, որոշել դրանց հարաբերական կարևորությունը, բացահայտել պատճառահետևանքային կապերը,
- Ակնկալվում է մեկ «Ճիշտ» պատասխան, որը կերաշխավորի բարձր գնահատական:
- Մեկ թեմայի շրջանակում պատճառների ուսումնասիրությունը ինքնստինքյան չի հանգեցնում մեկ այլ թեմայի պատճառների իմացության կամ ձեռբերված հմտությունների մեխանիկական կրկնության:



Բիսմարկ
հայդուկներ
17-րդ դար
քաղաքաշար
դասախոսություն
Ստեղծել
Նոր բան ստեղծել
Գնահատել
Հիմնավորել դիրքորոշումը, պնդումը
Վերլուծել
Տեղեկույթը բաժանել մասերի՝ ցույց տալով դրանց հարաբերությունները, պատճառները և հետևանքները
Կիրառել
Կիրառել տեղեկույթը նոր իրավիճակում, պատասխանել առաջադրված հարցադրումներին, խնդիրներ լուծել
Ընկալել
Բացատրել գաղափարները և կոնցեպտները
Մտապահել
Վերապատմել փաստերը կամ հիմնական կոնցեպտները
մուտք

Բիսմարկ
հայդուկներ
17-րդ դար
դասակարգում

# Պատճառների հետ աշխատանքի քայլաշար

1. Պատճառների թվարկում
2. Յուրաքանչյուր պատճառի հետևանքի/ների պարզաբանում
3. Պատճառների միջև կապերի և փոխհարաբերութ-յունների սահմանում
4. Պատճառների դասակարգում՝ ըստ բովանդակության
5. Պատճառների դասակարգում՝ ըստ դերակատարության
6. Պատճառների դասակարգում՝ ըստ կարևորության

քայլաշար
մուտք

# Ինչպե՞ս կարելի է դասակարգել պատճառները

**Պատճառներ**

**Ըստ դերակատարության՝**

Նախադրյալ

Պատրվակ

Ազդակ

Առիթ

Ա՞յլ

**Ըստ բովանդակության՝**

Քաղաքական

Տնտեսական

Մշակութային

Գաղափարախոսական

Ա՞յլ

**Ըստ կարևորության՝**

Կարևոր

Անհրաժեշտ

Բավարար

Ոչ կարևոր

**Ըստ ժամանակի՝**

Երկարաժամկետ

Միջնաժամկետ

Կարճաժամկետ

Բիսմարկ

հայդուկներ

# Պատճառների ուսումնասիրությունը հայոց պատմության դասին




## Պետության վերականգնման նախադրյալները 16-18-րդ դդ.

17-րդ դար

դասակարգում

քայլաշար

մուտք

# Պատճառների ուսումնասիրման ծառի մոդելը



# Պետության վերականգնման նախադրյալները 16-18-րդ դդ.

## Վերջնարդյունքներ

### Դաս 1

***Ներկայացնել*** Հայաստանի դրությունը Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի տիրապետության ներքո:

### Դաս 2

***Նկարագրել*** հայ առևտրական ցանցի առաջացման նախադրյալները և ***վերլուծել*** Նոր Ջուղայի առևտրական կառույցի դերը հայ առևտրական ցանցի առաջացման վրա, ***գնահատել*** դերը միջազգային առևտրում:

### Դաս 3

***Բացատրել*** **16-18-րդ դարերում հայկական ազատագրական շարժման աշխուժացման պատճառները:**

### Դաս 4

***Նկարագրել*** տարածաշրջանային իրավիճակը Այսրկովկասում 18-րդ դարի սկզբին և ***վերլուծել*** Արցախում և Սյունիքում հայերի զինված պայքարի պատճառները, ընթացքն ու հետևանքները, ***ներկայացնել*** Մադրասի խմբակի և Հովսեփ Էմինի ազատագրական ձեռնարկումները:

### Դաս 5

***Գնահատել*** 16-18-րդ դարերի ազատագրական շարժման ձեռքբերումներն ու ձախողումները:

# Ի՞նչ է անհրաժեշտ անել

**1** Աշակերտներին նախապես հանձնարարել ծանոթանալ «Ազատագրական պայքարի նախադրյալները» դասանյութին:

**2** Դասի ընթացքում խմբային քննարկման միջոցով դուրս բերել 16-18-րդ դարերում ազատագրական շարժման աշխուժացման պատճառները, գրի առնել դրանք գրատախտակին:

- Վաճառական դասի ձևավորում և քաղաքական դերակատարության բարձրացում
  - Նոր Ջուղայի առևտրական ցանցի ստեղծում
  - Վաճառականների մասնակցություն ազգային ծրագրերին
  - Վաճառականությունը՝ հասարակական բարձր խավ
- Օսմանյան կայսրության ներքին թուլացում
  - Ապստամբություններ կայսրության արևելքում
  - Գահակալական կռիվներ
- Քաղաքական փոփոխություններ Պարսկաստանում
  - Սեֆյան Իրանի թուլացում և անկում
  - Ազատագրման հնարավորություն Արևելյան Հայաստանում
  - Նադիր շահի գահակալություն
- Ռուսաստանի քաղաքական հետաքրքրությունների կենտրոնացում Այսրկովկասում
  - Իրանական տարածքների գրավման ձգտում
  - Պարսկահպատակ ժողովուրդների աջակցություն
- Եվրոպական հակաթուրքական դաշինք
  - Թուրքական սպառնալիք Կենտրոնական Եվրոպայում
  - Քրիստոնեական երկրների դաշինք թուրքերի դեմ (Պապի գլխավորությամբ)
  - Օսմանյան կայսրության դեմ խաչակրաց արշավանքի հեռանկար
- Կաթոլիկության տարածման երկրորդ ալիք
  - Պապի հետաքրքրություն Արևելքում կաթոլիկություն տարածելու խնդրով
    - Հայերը՝ Պապի ուշադրության կենտրոնում (որպես պոտենցիալ կաթոլիկներ)
- Հայոց եկեղեցին՝ որպես միավորիչ գործոն
  - Ամենայն հայոց կաթողիկոսի բացարձակ հեղինակություն հայության բոլոր շերտերում
  - Եկեղեցու դժգոհություն մահմեդական իշխող շրջանակներից
  - Եկեղեցու ներգրավվածություն ազատագրական նախագծերում

**3** Խմբերին հանձնարարել դասակարգել պատճառները՝ ըստ բովանդակության և բացատրել դասակարգումը:

**4** Պատճառները խմբավորել նաև ըստ ժամանակի և բացատրել դասակարգումը:

**5** Կատարված աշխատանքը զուգահեռաբար տեղադրել ծառի արմատների հատվածում:

**6** Թեմայի ամփոփման փուլում վերջնական տեսքի բերել ծառի տերևները՝ հետևանքները:

# Պատճառների ուսումնասիրման ծառի մոդելը

- ✓ Կախված խմբի տարիքից ու հմտություններից՝ պատճառները կարելի է աշակերտներին բաժանել նաև քարտերի տեսքով, որոնք խմբային, զույգերով կամ անհատական աշխատանքի միջոցով կխմբավորեն դրանք:
- ✓ Թեպետ ներկայացված է առցանց դասի մոդել, նույնը հեշտությամբ կարելի է կազմակերպել առկա դասերի ընթացքում՝ գրատախտակին ծառը նկարելով կամ պաստառի միջոցով, որի վրա կպչուն թղթերով կարելի է փակցնել պատճառներն ու հետևանքները:



# Պատճառների ուսումնասիրումը ձկան մոդելով

Ձկան գլուխը ուսումնասիրվող իրադարձությունն է: Փշերը հնարավոր պատճառներն են:



Ձուկը կիրառելի է նաև պատճառների դասակարգման ժամանակ:

Բիսմարկ

# Պատճառների ուսումնասիրությունը հայոց պատմության դասին



## ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

հայդուկներ

17-րդ դար

դասակարգում

քայլաշար

մուտք

# Հայդուկային շարժման առաջացումը

Բիսմարկ

### Արդեն ուսումնասիրել են

-Արևմտյան Հայաստանը Օսմանյան կայսրության կազմում:

-Հայկական հարցի միջազգայնացումը

-Հայկական քաղաքական կուսակցությունների ձևավորումը

-Արևմտահայության կոտորածների առաջին ալիքը:

### Այս դասին կուսումնասիրեն

-Ինչո՞ւ առաջացավ հայդուկային շարժումը:

### Ակնկալվող վերջնարդյունքներ

-Բացատրել հայդուկային շարժման առաջացման երկարաժամկետ և կարճաժամկետ պատճառները:

-Դասակարգել պատճառները՝ ըստ կարևորության:

հայդուկներ

17-րդ դար

դասակարգում

քայլաշար

մուտք

# Դասի փուլերը




1. Դուրս բերել Արևմտյան Հայաստանին առնչվող ներքին և արտաքին կարևորագույն իրադարձությունները 1829-1894 թթ. և կպչուն թերթիկներով փակցնել ծկան ողնաշարին:

2. Իրադարձությունների միջև պատճառահետևանքային կապերի ստեղծում

3. Խմբային աշխատանք՝ ըստ դերերի (ամիրաներ, գյուղացիներ, հոգևորականներ): Տարբեր դասերի տեսակետի դուրսբերում արևմտահայության դրության բարելավելու վերաբերյալ:

4. Դասի բուն թեմայի դուրսբերում. կենտրոնացում հայդուկային շարժման վրա: Պատճառների ցանկից հայդուկային շարժման երկարաժամկետ և կարճաժամկետ պատճառների առանձնացում:

5. Հայդուկային շարժման պատճառների դասակարգում՝ ըստ կարևորության:

# Փուլ I
# Պատճառների դուրսբերում



# Փուլ II
# Կապերի և հարաբերությունների սահմանում

Արևմտամետ բարեփոխումներ Օսմանյան կայսրությունում:

↓

Եվրոպական կապիտալի մուտք Օսմանյան կայսրություն

↓

Ձեռնարկատիրության զարգացում Օսմանյակ կայսրությունում

↓

Հայ ձեռներեցների դասի ձևավորում:

Օսմանյան կառավարության կողմից քրդերի և չերքեզների բնակեցում Արևմտյան Հայաստանում

↓

Հայ գյուղացիության ծանր կացություն

↓

Հայկական գյուղերից բնակչության արտագաղթ

# Փուլ II
# Պատճառների ընդլայնում

✓ Մեկ իրադարձությունը, երևույթը կարող են ունենալ մեկից ավելի պատճառներ:

✓ ***Օրինակ***՝ հայ բանվորական դասի ձևավորմանը նպաստել է երկու պատճառ՝

- գյուղացիության կամավոր և բռնի արտագաղթը դեպի քաղաքներ,
- հայ ձեռներեցների դասի ձևավորումը:

# Դասի փուլերը




1. Դուրս բերել Արևմտյան Հայաստանին առնչվող ներքին և արտաքին կարևորագույն իրադարձությունները 1829-1894 թթ. և կպչուն թերթիկներով փակցնել ծկան ողնաշարին:

2. Իրադարձությունների միջև պատճառահետևանքային կապերի ստեղծում

3. Խմբային աշխատանք՝ ըստ դերերի (ամիրաներ, գյուղացիներ, հոգևորականներ): Տարբեր դասերի տեսլականի դուրսբերում արևմտահայության դրության բարելավելու վերաբերյալ:

4. Դասի բուն թեմայի դուրսբերում. կենտրոնացում հայդուկային շարժման վրա: Պատճառների ցանկից հայդուկային շարժման երկարաժամկետ և կարճաժամկետ պատճառների առանձնացում:

5. Հայդուկային շարժման պատճառների դասակարգում՝ ըստ կարևորության:

## Փուլ V
## Պատճառների դասակարգում՝ ըստ կարևորության

*Ի՞նչ տեղի կունենար, եթե...*

- Տարրերից մեկը վերանա/այլ կերպ տեղի ունենա, ի՞նչ կլինի:
- Արդյո՞ք արդյունքը նույնը կլինի:
- Արդյոք այն տեղի կունենա՞ նույն ժամանակ:
- Արդյոք նու՞յն կերպ տեղի կունենա:

# Փուլ V
# Պատճառների դասակարգման արդյունքը

## Կարևոր / խիստ անհրաժեշտ/ առանցքային

- Թուրքերի և քրդերի հալածանքներ հայ գյուղացիության նկատմամբ:
- Բեռլինի կոնգրեսում սահմանված բարենորոգումների չիրականացում:
- Բեռլինի կոնգրեսից հետո հայերի նկատմամբ հալածանքների սաստակացում՝ գոյության համար այլընտրանքային հնարավորություն չթողնելը
- Կիսանկախ իշխանությունների գոյություն և այնտեղի հայ բնակչության մոտ զինված պայքարի փորձի առկայություն (Զեյթուն)

## Պակաս կարևոր / բավարար

- Օսմանահպատակ այլ ժողովուրդների փորձը (Բալկաններ)
- Քաղաքական հոսանքների ձևավորում
- Ազատագրական խմբակների և կազմակերպությունների ձևավորում
- Կուսակցությունների ձևավորում

# Պատճառների ուսումնասիրությունը համաշխարհային պատմության դասին

## ՕՏՏՈ ՖՈՆ ԲԻՍՄԱՐԿԸ
## ԵՎ
## ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ




Բիսմարկ
հայդուկներ
17-րդ դար
դասակարգում
քայլաշար
մուտք

# Առաջին աշխարհամարտի պատճառները

Արդեն ուսումնասիրել են

-Բիսմարկի արտաքին քաղաքական նպատակները

-Բիսմարկի դաշինքների համակարգի մաս կազմող բոլոր դաշինքների ձևավորումը

Այս դասին կուսումնասիրեն

-Ինչո՞ւ ձևավորվեց Բիսմարկի դաշինքների համակարգը

Ակնկալվող վերջնարդյունքներ

-Կկարողանան բացատրել Բիսմարկի դաշինքների ձևավորման պատճառները

-Վերլուծել Դաշինքների համակարգի երկարաժամկետ և կարճաժամկետ հետևանքները

-Գնահատել և հիմնավորված դիրքորոշում արտահայտել, թե որքանով էր Բիսմարկը 1890 թ. դրությամբ հասել իր արտաքին քաղաքական նպատակներ

# Ի՞նչ է անհրաժեշտ






Բիսմարկ

հայդուկներ

17-րդ դար

դասակարգում

քայլաշար

մուտք

# ՔԱՅԼ 1 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ. *ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ*



Լիա Գրիգորյան
Արմենուհի Արեւիանյան
Ալեքսանդրա Համբարձումյան
Ալինա Սահակյան

## ՕՏՏՈ ՖՈՆ ԲԻՍՄԱՐԿԸ ԵՎ ԴԱՇԻՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

ա/Գերմանիան հեռու պահել եռակողմ պատերազմից:
բ/Մեկուսացնել Ֆրանսիային:
գ/ Խուսափել Ռուսաստանի և Ավստրո-Հունգարիայի միջև ընտրություն կատարելուց:
դ/Մեծ տերություններին վստահեցնել, որ Գերմանիան «կուշտ» պետություն է:

**Պատճառները**

- Ռուս-ֆրանսիական դաշինք արգելելու հնարավորությունը մեծացավ:
- Ամրապնդել Գերմանիայի և Ավստրիայի դիրքերը:
- 3 կայսրերի դաշինքով ամրապնդվել էին Ռուսաստանի դիրքերը, հարկ էր վերականգնել ուժերի հավասարակշռությունը եվրոպայում, Ավստրիայի հետ համարել նախկին պայմանավորվածությունները:
- Ռուսաստանին հասկացնել, որ միակ ճիշտ ընտրությունը Գերմանիայի ճամբարում գտնվելն է:

**Դրական հետեւանքները**

- Ֆրանսիային ավելի կղզիացնել, քանի որ Իտալիան միացավ Գերմանիայի դաշինքին:
- Ավստրիայի հարավային սահմանների անվտանգությունը ապահովել (Իտալիայից):
- Ռուսաստանին հասկացնել, որ նրա համար շահավետ է Գերմանիայի հետ լինել, այլ ոչ թե պատերազմել նրա դեմ:
- Գերմանաֆիլների ազդեցության մեծացումը Ռուսաստանում:

**ԵՌՅԱԿ ԴԱՇԻՆՔ**

1871 — 1882 — 1890

**Բացասական հետեւանքները**

- Մեծացրել Ռուս-Ֆրանսիական համագործակցության հնարավորությունը:
- Ընդգրկված էին սխալ դաշնակիցներ (Ավստրո-Հունգարիա, Իտալիա), դաշինքն ամուր չէր:
- 2 դաշնակիցներն էլ ռազմական առումով թույլ էին, ունեին էթնիկ տարբեր խմբեր, Իտալիան չուներ ռազմական ուժ, չէին կարող պահպանել Գերմանիայի անվտանգությունը:

Բիսմարկ
հայդուկներ
17-րդ դար
դասակարգում
քայլաշար
մուտք



# ՔԱՅԼ 2 ՀԱՄԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ. *ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԿԱՊԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ*














# ՔԱՅԼ 3 ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ.
## *ՓԱՍՏԱՐԿՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՓՈՒԼ*







# Պատճառների դասակարգում՝ ըստ կարևորության. «9 ադամանդ» (4, 16…)



1. Բարձրագույն

2.Բարձր

3. Բարձր

4. Միջին

5. Միջին

6. Միջին

7. Ցածր

8. Ցածր

9. Ցածրագույն

Բիսմարկ

հայդուկներ

17-րդ դար

դասակարգում

ամփոփում

մուտք

# Պատճառների դասակարգում՝ ըստ կարևորության. «9-մաս եռանկյունի»

| | | | |
|---|---|---|---|
| Վերնագիր Նկարագրություն | | | Սա բոլոր պատճառներից ամենակարևորն է, քանի որ.... |
| Վերնագիր Նկարագրություն | Վերնագիր Նկարագրություն | | Այս երկուսը պակաս կարևոր են, քան վերոնշյալը, քանի որ.... |
| Վերնագիր Նկարագրություն | Վերնագիր Նկարագրություն | Վերնագիր Նկարագրություն | Այս պատճառները միջին կարևորություն ունեն, քանի որ.... |
| Վերնագիր Նկարագրություն | Վերնագիր Նկարագրություն | | Այս երկուսն ավելի կարևոր են, քան ներքոնշյալը, քանի որ.... |
| Վերնագիր Նկարագրություն | | | Այս պատճառը նվազագույն կարևորություն ունի, քանի որ.... |

*Ընտի՛ր 9 պատճառ քննարկման համար: Դասավորի՛ր այնպես, որ առավել կարևորները լինեն վերևում, պակաս կարևորները ներքում: Բացատրի՛ր քո ընտրությունը:*



Եթե սովորողների պատճառաբանության բառապաշարը սահմանափակված է «պատճառ» և «հիմք» բառերով, ապա նրանք երբեք չեն կարողանա հիմնավոր և ճշգրիտ կերպով վերլուծել գործընթացը... Պատճառաբանության տարբեր տեսակներ տարբեր բառեր են պահանջում...

*Վուդքոկ, 2005*

Բիսմարկ

հայդուկներ

17-րդ դար

դասակարգում

քայլարշար

մուտք

# Հարստացրե՛ք աշակերտների բառապաշարը=մտածողությունը

- Հավակ (հնg.)-սկզբնապատճառ
  - Նախապաճառ
  - Նախադրյալ
  - Շարժառիթ
  - Դրդապատճառ
  - Առիթ
  - Տեղիք-պատճառ, առիթ, հիմք
  - Պատճառանք (որևէ բան արդարանելու, պատճառաբանելու համար բերվող հիմնավորում, փաստարկ, մտացածին պատճառ)
  - Պատրվակ (որևէ բան արդարացնող, մեղմացնող պատճառ, երբեմն էլ հնարովի, մտացածին պատճառ՝ որևէ բան արդարացնելու համար, պատճառանք)
  - Ազդակ (որևէ բանին նպաստող, առաջ բերող հանգամանք)
  - Խթան (առաջ մղող ազդակ՝ գործոն)
  - Հիմք



# Ի՞նչ կարող են անել պատճառները. օգտակար բայեր

Ծագել
Սկզբնավորել
Առաջ գալ
Գոյանալ
Երևան գալ
Հիմքում ընկնել

Առաջացնել
Նպաստել
Խթանել
Հանգեցնել
Արագացնել
Դանդաղեցնել
Զարկ տալ
Կանխել

Նախորդել
Հաջորդել
Սրել (իրավիճակը)
Բորբոքել
Դրդել
Կանխել
Քողարկել
Վատթարացնել
Բարելավել

- «Եռյակ դաշինքը ստեղծվել է նաև Ֆրանսիայի մեկուսացման համար: Սա *կարևոր երկարաժամկետ ռազմավարական դրդապատճառ* էր: Բիսմարկը իր ամբողջ կառավարման ընթացքում փորձում էր մեկուսացնել Ֆրանսիային, քանի որ հակառակ դեպքում ֆրանսիան կունենար դաշնակիցներ և ֆրանս-գերմանական պատերազմը կդառնար անխուսափելի»:
- «Գերմանիայի *շարժառիթներից* մեկը այս պայմանագրի կնքման համար հնարավոր պատերազմի դեպքում իտալաավստրիական սահմանում ավստրիական զորքերի պահպանման անհրաժեշտությունը վերացնելն էր: Բիսմարկի գլխավոր նպատակներից էր Գերմանական կայսրության անվտանգության պահպանումը: Այս պայմանագրից հետո Գերմանիայի վրա որևէ հարձակման դեպքում իր դաշնակից Ավստրիան կարող էր զորքեր չպահել Իտալիայի հետ սահմանում, այլ օգտագործել դրանք Գերմանիային օգնելու համար, քանի որ Իտալիան արդեն Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի դաշնակիցն էր»:
- «Եռյակ դաշինքին Ավստրո-Հունգարիայի միանալու *նախապատճառներից* էր Ռուսաստանի հետ մրցակցությունը Բալկաններում և նրանից պաշտպանվելու անհրաժեշտությունը: Դեռևս Երեք կայսրերի լիգայի կնքումից առաջ նրանց հարաբերությունները լարված էին, իսկ 1875 թ. Բուլղարական ճգնաժամից հետո էլ ավելի լարվեցին»:



**Ե՛ւ** բովանդակային գիտելիք (substantive knowledge)

**Ե՛ւ** ընթացային գիտելիք (procedural knowledge)

exodus

Բիսմարկ

հայդուկներ

17-րդ դար

# ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

*Որքանո՞վ է ձեզ դուր գալիս աշխատել պատճառների շուրջ: Ինչո՞ւ:*

«Սովորել միայն պատմական իրադարձությունները և չհասկանալ դրա պատճառները բավականին անհետաքրքիր է, քանի որ մենք կարող ենք լավ իմանալ տեղի ունեցած իրադարձությունը և թվականը, թե երբ է այն եղել, բայց չմարզենք մեր միտքը և փորձենք տրամաբանորեն եզրահանգել, թե իրականում ինչու է եղել այդ իրադարձությունը: Ինձ շատ են դուր գալիս այս աշխատանքները»:

«Հետաքրքիր է պարզել և վերլուծել դրանց միջև պատճառահետևանքային կապը: Աշխատանքը օգնում է ամրապնդել գիտելիքը և հասկանալ պատճառների կարևորությունը, դերերը, մեկը մյուսի համար առիթ հանդիսանալը»:

«Նախևառաջ բարելավվում է վերլուծական միտքը: Պատճառների շուրջ քննարկելը թույլ է տալիս հանգել որոշակի եզրակացության կամ կատարել որևէ կանխատեսում երևույթի վերաբերյալ: Այնուհետև պատճառների միջոցով կարելի է միմյանց հետ կապել միմյանց նման երևույթներ, իրադարձություններ, որը ավելի կբարելավվի մեր պատկերացումները միջազգային հարաբերությունների մասին»:

# ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

*Ի՞ՆՉ Է ՁԵԶ ՏԱԼԻՍ ԱՅԴ ԱՇԽԱՏԱՆՔԸ:*

«Ստիպում է վերհիշել անցած ամբողջ փաստական գիտելիքը և կապել միմյանց հետ: Ինչպես նաև զարգացնում է վերլուծական միտքը»:

«Պատճառներն առանձնացնելն ու դասակարգելը պատմության ամենագրավիչ կողմերից է: Արդեն կարողանում եմ այդ հմտությունները դասերից դուրս էլ օգտագործել: Ամեն երևույթի համար ինքնաբերաբար սկսում եմ առանձնացնել պատճառները, նույնիսկ դասակարգել դրանք:Սիրում եմ պատճառների հետ աշխատել»:

«Խորքային մտքերի բացահայտում, որոնք առաջին հայացքից չեն երևում, և պետք է կատարել այս կամ այն իրադարձության պատճառների շուրջ քննարկում՝ այդ մտքերն ըմբռնելու համար»:

# Շնորհակալություն

exodus
Բիսմարկ
հայդուկներ
17-րդ դար
դասակարգում
քայլաշար
մուտք